

## Սպիտակ քաղաքի «Կենտրոն-1» թաղամասի 23 բնակելի շենքերի կենտրոնացված ջերմամատակարարման համակարգի գործարկման ծրագիր

2007թ. մարտի 22-ին Սպիտակի քաղաքապետարանի և ՄԱԶԾ/ԳԷՖ «Հայաստան. քաղաքային ջեռուցման և տաք ջրամատակարարման էներգաարդյունավետության բարձրացում» ծրագրի միջև ստորագրվել է Փոխըմբռնման հուշագիր, որի նպատակն է Սպիտակի քաղաքապետարանին աջակցել կենտրոնացված ջերմամատակարարման համակարգի գործարկման համար:

Սույն Հուշագրի շրջանակներում ՄԱԶԾ/ԳԷՖ Ծրագրի բյուջեի միջոցների հաշվին ձեռք են բերվել անհրաժեշտ սարքավորումներ և իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- ✓ ոչ ժամանակակից գազի այրիչները փոխարինվել են ժամանակակից էներգաարդյունավետ այրիչներով,
- ✓ տեղադրվել է գազի հաշվիչ
- ✓ Էլ. էներգիայի ծախսի նվազեցման նպատակով ցանցային և սնող պոմպերը փոխարինվել են նորերով
- ✓ տեղադրվել են սառը ջրի տարողություն, ջրաչափ, ճնշման ապահովիչ փականներ և օդահեռացուցիչներ
- ✓ շենքերի մուտքերում տեղադրվել են հիդրավլիկ բալանսավորման փականներ,
- ✓ շենքերի ջեռուցման ներքին համակարգերում վերացվել են թերությունները, կենտրոնական ջեռուցումից հրաժարվող բնակարաններն անջատվել են համակարգից և այլն:

Կենտրոնական ջեռուցման համակարգին միանալու ցանկություն ունեցող սպառողների թիվը պարզելու համար ՄԱԶԾ/ԳԷՖ Ծրագրի կողմից բնակչության շրջանում իրականացվել է հարցում: Կենտրոնական ջեռուցման համակարգին միանալու ցանկություն է հայտնել ընդհանուր սպառողների 65%: Այդ նպատակով հաշվարկվել է ջերմային էներգիայի նախնական սակագինը:

Սակայն, լրացուցիչ աշխատանքների իրականացման, որոշ սարքավորումների մատակարարման ժամկետի ուշացման, ինչպես նաև Սպիտակի քաղաքապետարանի կողմից կաթսայատան գազամատակարարման ապահովման աշխատանքների չիրականացման պատճառներով որոշ աշխատանքներ դեռևս չեն ավարտվել:

2007թ. նոյեմբերի 20-ին սկսված արտաքին ջերմային ցանցի նախնական հիդրավլիկային փորձարկումների ընթացքում պարզվել է, որ ցանցի որոշ հատվածներում գոյանում է ջրի մեծ արտահոսք և ողողում կաթսայատունը և դիտահորերը: Այդ ընթացքում դրսի օդի ջերմաստիճանի կտրուկ անկման պատճառով հնարավոր չէրավ իրականացնել ցանցի նորոգման աշխատանքները:

Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, ՄԱԶԾ/ԳԷՖ Ծրագրի և Սպիտակի քաղաքապետարանի կողմից համատեղ որոշում կայացվեց դադարեցնել աշխատանքները և այն շարունակել 2008թ. գարնանը՝ դրսի օդի դրական ջերմաստիճանների պայմաններում: